ԽԱՉՍՏԵՐՈՒԿՆԵՐ

JONATHAN FRANZEN

CROSSROADS

A NOVEL

ՑՈՆԱԹԱՆ ՖՐԱՆԶԵՆ

ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐ

ՎԵՊ

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Աթաբեկյանի

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 821.111(73)–31Ֆրանզեն
ԳՄԴ 84(7ԱՄՆ)–44
Ֆ 851

Ֆ 851 Ֆրանզեն Ջոնաթան
Խաչմերուկներ: Վեպ / Ջ. Ֆրանզեն.– Եր.: Newmag, 2025.– 648 էջ:

1971-ի դեկտեմբերն է, Չիկագոյում և հարակից շրջաններում սպասվում է ահավոր եղանակ: Քաղաքի գլխին ամպեր են կուտակվում: Ծխական քահանա Ռաս Հիլդեբրանտը գրեթե պատրաստ է վերջ դնել իր անուրախ ամուսնությանը: Բայց պարզվում է՝ ընտանեկան միօրինակ կյանքը հոգնեցրել է նաև նրա կնոջը՝ Մերիոնին, որն էլ ի՛ր գաղտնիքներն ունի: Նրանց ավագ որդին՝ Ջլեմը, քոլեջից տուն է վերադառնում մի որոշումով, որը կցնցի հորը: Նրանց դուստրը՝ ավագ դպրոցի թագուհի Բեքին, տարվել է կրոնահոգևոր փնտրտուքով, երրորդ երեխան՝ Փերրին, որը կրտսեր դասարանների աշակերտներին թմրանյութ է վաճառում, որոշում է փոխվել և ավելի լավը դառնալ:

Հիլդեբրանտների ընտանիքում յուրաքանչյուր ոք ձգտում է ազատության, սակայն այդ ճանապարհին ընտանիքի ամեն անդամ ամեն կերպ խոչընդոտում է մյուսին: «Խաչմերուկներ» վեպում Ջոնաթան Ֆրանզենը մեկ ընտանիքի օրինակով ներկայացնում է 1970-ականների Ամերիկայի ամբողջ խառնաշփոթը՝ հասարակության ներսում հասունացող ոգևորության ալիքը և բարոյական խորացող ճգնաժամը:

Այս գիրքը մարդկային հարաբերությունների և մենության մասին է, հայրերի ու որդիների հավերժական պայքարի ու այն մասին, թե երեխաներն ինչպես են կրկնում ծնողների սխալները, որքան էլ ընդդիմանում են նրանց: Հարազատներ, որոնք իրենց անտարբերությամբ ցավ են պատճառում միմյանց:

Այս պատմությունը կյանքի այն խաչմերուկների մասին է, որոնցով յուրաքանչյուր ոք վաղ թե ուշ անցնում է, և, որքան էլ դառը լինի ազատության գինը, այն միշտ տեղ է թողնում հույսի համար: «Կյանքը խառնաշփոթ է, և դա հրաշալի է»:

ՀՏԴ 821.111(73)–31Ֆրանզեն
ԳՄԴ 84(7ԱՄՆ)–44

ISBN 978-9939-967-99-8
Copyright © 2021 by Jonathan Franzen
First published by Farrar, Straus and Giroux
Translation rights arranged by PLIMA d.o.o
All Rights Reserved

Ջոնաթան Ֆրանզեն «Խաչմերուկներ» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Նախատոնակ 7

Ջատիկ 413

Քիթիի համար

Նախատոնակ

Երկնքում, որ կտրտված էր Նյու Փրոսփեքթի մերկ կաղնիներով ու թեղիներով, թանձրանում էր խոնավության խոստումը, երկու մթագնած մթնոլորտային ճակատներ պայմանավորվում էին ձյուն տեղալ Ծննդյան տոներին, իսկ Ռաս Հիլդեբրանտն առավոտից սովորականի պես իր Plymouth Fury ֆուրգոնով շրջայցում էր անկողնուն գամված զառամյալ ծխական բնակիչներին: Եկեղեցու անդամներից մեկը՝ տիկին Ֆրենսիս Քոթրելը, առաջարկել էր այդ օրը միասին խաղալիքներ ու պահածոներ տանել «Աստծո համայնք», ու չնայած Ռասը գիտեր, որ բարի կամքի այդ դրսևորման համար կարող է ուրախանալ զուտ այն պատճառով, որ ինքը նրա հոգևոր հովիվն է, Ծննդյան տոների ավելի լավ նվեր, քան այդ կնոջ հետ չորս ժամ մենակ մնալն է, երազել չէր կարող:

Ռասի նվաստացումից հետո, ինչից երեք տարի էր անցել, եկեղեցու ավագ քահանա Դուայթ Հեֆլը մեծացրել էր իր տեղակալի հովվապետական այցերի ծանրաբեռնվածությունը: Թե ինչպես էր Դուայթը տնօրինում իր ժամանակը, որ նրա համար խնայում էր Ռասը, անհայտ էր, պարզապես հիմա ավելի հաճախ էր արձակուրդ վերցնում և աշխատում էր քնարական բանաստեղծությունների իր ժողովածուի վրա: Սակայն Ռասին դուր էր գալիս, թե ինչպիսի սեթևեթանքով է իրեն դիմավորում անդամահատությունից հետո առաջացած խոշոր այտուցների պատճառով բժշկական մահճակալին գամված տիկին Օ'Դուայերը, որին տեղավորել էին իր ճաշասենյակում: Դուր էր գալիս ամեն օր օգտակար լինել հատկապես նրանց, ովքեր, ի տարբերություն իրեն, չէին հիշում, թե ինչ էր պատահել երեք տարի առաջ: Հինսդեյլի ծերանոցում, որտեղ տոնական փշատերև պսակների բույրերը խառնվում էին ծերունական արտաթորանքի գարշահոտին՝ հիշեցնելով Հյուսիսային Արիզոնայի լեռների արտաքնոցները, նա զառամյալ Ջիմ Դևերոյին հանձնեց նոր ծխական ալբոմը, որը զուտ խոսակցություն բացելու պատրվակ էր, ու հարցրեց՝ հիշո՞ւմ է Ջիմը

Փաթիսոնների ընտանիքը: Նախատոնակի ոգով համակված ծխական քահանայի համար Ջիմն իդեալական վստահորդ էր, ցանկությունների ջրհոր, որի մեջ նետված մետաղադրամը երբեք չի դիպչի հատակին ու չի արձագանքի:

— Փաթիսոնների՞ն,– ասաց Ջիմը:

— Մի աղջիկ ունեին, Ֆրենսիսը,– Ռասը կռացավ նրա հաշմասայլակի վրա ու թերթեց ալբոմը՝ հասնելով «Ֆ» տառին: — Հիմա ամուսնու ազգանունով է, Ֆոթրել: Ֆրենսիս Ֆոթրել:

Ռասը տանը չէր խոսում նրա մասին, նույնիսկ եթե խոսքը նրան էր վերաբերում. վախենում էր, որ կինն ինչ-որ բան կլսի իր ձայնի մեջ: Ջիմը կռացավ Ֆրենսիսի ու նրա երկու երեխաների լուսանկարի վրա:

— Ա՛խ, Ֆրենին: Հիշում եմ Ֆրենի Փաթիսոնին: Ի՞նչ է պատահել նրան:

— Վերադարձել է Նյու Փրոսփեքթ: Մեկուկես տարի առաջ կորցրել է ամուսնուն. ահավոր դեպք է: Ամուսինը փորձարկող օդաչու էր «Ջեներալ դայնեմիքսում»*:

— Որտե՞ղ է նա հիմա:

— Վերադարձել է Նյու Փրոսփեքթ:

— Ա՛խ, հա: Ֆրենի Փաթիսոնը: Եվ որտեղ է նա հիմա՞:

— Վերադարձել է հայրենի քաղաք: Հիմա նա տիկին Ֆրենսիս Ֆոթրելն է,– Ռասը ցույց տվեց նրա լուսանկարն ու կրկնեց: — Ֆրենսիս Ֆոթրել:

Նրանք ժամը 14:30 պիտի հանդիպեին Առաջին ռեֆորմատական եկեղեցու կայանատեղում: Բայց Ռասը եկավ ժամը 12:45, տղայի պես, որն անհամբեր սպասում է Ծննդյան տոնին: Մեքենայի մեջ նստած ծամում էր տնից բերած լանչը: Անհաջող օրերին, որ վերջին երեք տարիներին քիչ չէին նրա կյանքում, հաճախ եկեղեցի էր մտնում շրջանցիկ, ոլոր-մոլոր ճանապարհով. հավաքույթների սրահով, սանդուղքով վերև, հետո՝ միջանցքով, որ լցված էր «Ուխտավորների օրհներգերի» ժողովածուներով, ծռմռված գրակալներով ու խաղալիք մսուրքով, որ վերջին անգամ ցուցադրվել էր 11 նախատոնակ առաջ՝ գույնզգույն փայտե ոչխարներ ու մենավոր, փոշուց գորշացած մի խոնարհ եզ, որի նկատմամբ Ռասը տխուր հարազատություն էր զգում, հետո՝ ներքև, նեղլիկ սանդուղքով, որտեղ

* Ամերիկյան ընկերություն, ռազմական և տիեզերական տեխնիկայի խոշորագույն արտադրողներից: (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

միայն Աստված կարող էր տեսնել ու դատել նրան, դեպի սրբություն սրբոցը՝ խորանի հետևի վահանակների միջով բացվող «գաղտնի» դռնակը (որ չանցնի երիտասարդական ծրագրերի տնօրեն Ռիք Էմբրոուզի աշխատասենյակի մոտով)։ Էմբրոուզի դռան առաջ խմբված դեռահասները դժվար թե տեսած լինեին Ռասի նվաստացումը, քանի որ այն ժամանակ շատ փոքր էին, բայց հաստատ լսել էին այդ պատմությունը, և Ռասը չէր կարող նայել Էմբրոուզին ու չխոստովանել Փրկչի օրինակին հետևելու և նրան ներելու իր անկարողությունը։

Բայց այսօր հազվագյուտ հաջողակ օր էր, և Առաջին ռեֆորմատականի միջանցքները դեռ դատարկ էին։ Ռասն ուղիղ անցավ իր սենյակ, մի թուղթ դրեց գրամեքենայի մեջ ու սկսեց մտմտալ չգրված քարոզը Ծննդյան տոների հաջորդ կիրակիի համար, երբ Դուայթ Հեֆլը նորից կգնա արձակուրդ։ Նա կծկվեց բազկաթոռի մեջ, եղունգներով հարթեց ունքերը, տրորեց քթարմատը, ափերով շփեց դեմքը, որի կոպիտ գծերը, ինչպես Ռասն ուշացումով հասկացել էր, դուր էին գալիս շատ կանանց, բայց ոչ իր կնոջը, ու պատկերացրեց, թե ինչպես է քարոզ կարդում Սաութ Սայդ կատարած Ծննդյան ուղևորության մասին։ Նա շատ հաճախ էր քարոզում Վիետնամի մասին, չափազանց հաճախ էր հիշատակում նավախոնցեղը։ Ամբիոնից համարձակ հայտարարել «ես և Ֆրենսիս Քոթրելը պատիվ ենք ունեցել...», արտաբերել նրա անունը, երբ նա նստած է չորրորդ կարգում, ու ծխականների հայացքները թերևս նախանձով միավորում են իրենց. այդ հաճույքից նա, ավա՜ղ, զրկված էր, քանզի կինը, որը նախապես կարդում էր նրա քարոզները, նույնպես նստած էր լինելու ամբիոնի դիմաց՝ չիմանալով, որ Ֆրենսիսն այսօր մեկնելու է ամուսնու հետ։

Աշխատասենյակի պատերին ազդագրեր էին՝ Չարլի Փարքերը՝ սաքսոֆոնով, Դիլան Թոմասը՝ ծխախոտով, շրջանակում՝ Փոլ Ռոբսոնի ավելի փոքր լուսանկարն ու կողքին 1952-ին Ջադսոնի եկեղեցում ունեցած ելույթի ազդագիրը, Նյու Յորքի հոգևոր ճեմարանի Ռասի դիպլոմը, նրա մեծացրած լուսանկարը՝ երկու նավախոնի ընկերների հետ Արիզոնայում, 1946-ին։ Երբ 10 տարի առաջ Նյու Փրոսփեքթում քահանայի օգնական նշանակվեց, նրա հայացքների այդ հմտորեն ընտրված վկայություններն արձագանք էին գտնում դեռահասների սրտերում, որոնց քրիստոնեական զարգացումը նրա պարտականությունների ոլորտում էր։ Սակայն լայն փողքերով, կոմբինեզոններով ու բանդանաներով երիտասարդությունը,

որ հիմա հրմշտվում էր եկեղեցու միջանցքներում, դրանք անցյալի մնացուկ էր համարում: Բարակ մազերով ու Ֆու Մանչուի* ոճի փայլուն, սև բեղերով Ռիք Էմբրոուզն իր սենյակում մանկապարտեզի նման մի բան էր բացել. պատերին ու դարակներին իր երիտասարդ աշակերտների ինքնադրսևորման կոպիտ ներկոտած պտուղներն էին՝ քարերից, ճերմակած ոսկորներից ու վայրի ծաղիկներից հյուսած հատուկ իմաստ կրող մանյակներ, Ռասին հայտնի դավանանքներից ոչ մեկի հետ առնչություն չունեցող բարեգործական համերգների նախշակաղապարե ազդագրեր: Ապրած նվաստացումից հետո նա թաքնվել էր աշխատասենյակում ու տառապում էր իր ջահելության խունացող տոտեմների շրջապատում: Այդ տոտեմները կնոջից բացի այլա ոչ մեկին չէին հետաքրքրում: Իսկ Մերիոնը հաշիվ չէր, քանի որ հենց նա էր համոզել մեկնել Նյու Յորք, հետաքրքրվել Փարքերով, Թոմասով, Ռոբսոնով, Մերիոնն էր հիացել նավախոների մասին նրա պատմություններով ու համոզել անսալ սրտին ու հոգևորական դառնալ: Մերիոնն անբաժան էր նրան նվաստացում բերած ինքնությունից: Վիճակը փոխելու համար նրան պետք էր Ֆրենսիս Քոթրելը:

— Աստված իմ, դո՞ւ ես,– հարցրել էր Ֆրենսիսն անցած ամառ, երբ առաջին անգամ հայտնվել էր նրա աշխատասենյակում ու նայում էր նավախոների ռեզերվացիայի լուսանկարները: — Ոնց որ ջահել Չառլթոն Հեսթոնը** լինես:

Ռասի մոտ եկել էր խորհուրդ հարցնելու, թե ինչպես դիմանա կորստին. զրույցները վերջերս հարազատին կորցրած մարդկանց հետ նրա ևս մի, ընդ որում, չսիրած պարտականությունն էին, քանի որ Ռասի ամենածանր կորուստն առայժմ Սքիփերն էր՝ իր մանկության շունը: Բայց շուտով Ռասը թեթևացած շունչ քաշեց, երբ պարզվեց, որ Տեխասում ամուսնու հրաշունչ մահվանից մի տարի անց Ֆրենսիսին ամենից ավելի տանջում է դատարկության զգացումը: Ծխական կանանց խմբակներից որևէ մեկին անդամագրվելու Ռասի առաջարկը Ֆրենսիսը մերժեց:

— Չեմ ուզում սուրճ խմել այդ տիկինների հետ,– ասաց: — Իհարկե, տղաս ուր որ է ավագ դպրոց կփոխադրվի, բայց ես ընդամենը 36 տարեկան եմ:

---

* Այսինքն՝ երկար, կախված բեղերով: Դոկտոր Ֆու Մանչուն բրիտանացի գրող Սաքս Ռոմերի հորինած գրական կերպարն է, չարի մարմնացում:

** Charlton Heston, Չառլթոն Հեսթոն (1923–2008) – ամերիկացի դերասան, Օսկարի դափնեկիր

Դեմքին իսկապես ոչ մի ծալք չուներ, ոչ մի խորշում, ոչ մի ճարպագնդիկ, ոչ մի գիծ. մարմնացյալ եռանդով, զարդանախշ անթև շորով, ի բնե բաց-գույն, կարճ կտրած, տղայական մազերով, փոքրիկ, լայնոտ, նույնպես տղայական ափերով: Ռասը չէր էլ կասկածում, որ Ֆրենսիսը երկար չի մնա մենակ, և դատարկությունը, որ տանջում էր նրան, փոքր-ինչ ավելին էր, քան ամուսնու բացակայությունը, բայց նաև հիշում էր, թե ինչպես բարկացավ մոր վրա, որը Սքիփերի մահվան համարյա թե հաջորդ օրը հարցրեց, թե տղան նոր շուն չի՞ ուզում:

Ռասն ասաց, որ կանանց հատուկ խմբակ կա, մյուսներից տարբեր, որը վարում է անձամբ ինքը. այդ խմբակն աշխատում է «Աստծո համայնքի»՝ Ռեֆորմատական եղբայրական եկեղեցու ծխականների հետ:

— Տիկնայք սուրճ չեն խմում,– ասաց նա: — Մենք տների պատեր ենք ներկում, թփեր խուզում, աղբ թափում: Ծերերին տանում ենք բժշկի, օգնում, որ երեխաները դասերը սովորեն: Այդ գործերով զբաղվում ենք ամեն երեքշաբթի, առավոտից երեկո: Եվ հավատա, անհամբեր սպասում եմ այդ երեքշաբթիներին: Ահա և մեր հավատի պարադոքսներից մեկը. որքան շատ ես տալիս դժբախտներին, այնքան մոտ ես զգում Քրիստոսին:

— Այնքան հեշտ ես տալիս նրա անունը,– նկատեց Ֆրենսիսը: — Արդեն երեք ամիս գնում եմ կիրակնօրյա ժամերգության ու դեռ ոչինչ չեմ զգում:

— Այսինքն՝ նույնիսկ իմ քարոզները քեզ չեն հուզում:

Կինը հմայիչ կարմրեց:

— Դա նկատի չունեի: Դու գեղեցիկ ձայն ունես: Բայց...

— Անկեղծ ասեմ, ավելի շուտ երեքշաբթիներին կզգաս, քան կիրակիներին: Ինձ էլ շատ ավելի դուր է գալիս լինել Սաութ Սայդում, քան քարոզ կարդալ:

— Սևամորթների՞ եկեղեցի է:

— Այո: Մեր ղեկավարը Քիթի Ռեյնոլդսն է:

— Ինձ դուր է գալիս Քիթին: Ավարտական դասարանում մեզ անգլերեն էր դասավանդում:

Քիթին Ռասին էլ էր դուր գալիս, բայց զգում էր, որ նրա սրտով չէ որպես արական սեռի ներկայացուցիչ: Մերիոնն ասում էր, որ Քիթին, որը երբեք ամուսնացած չէր եղել, ամենայն հավանականությամբ, լեսբուհի է: Երկու շաբաթը մեկ Սաութ Սայդ գնալիս՝ նա փայտահատի պես էր հագնվում և արագորեն սեփականացրեց Ֆրենսիսին՝ պնդելով, որ նա այնտեղ մեկնի

ու վերադառնա իր հետ, ոչ թե Ռասի ֆուրգոնով: Հիշելով կնոջ անբարեհաճությունը՝ Ռասը հաղթանակը զիջեց նրան և սպասում էր, թե Ջիթին երբ է հիվանդանալու, որ ոչ մի տեղ չմեկնի:

Գոհատոնի հաջորդ երեքշաբթի, երբ ամենուր հարբուխ էր տարածվել, Առաջին ռեֆորմատականի ավտոկայանատեղի եկան ընդամենը երեք տիկին, բոլորը՝ այրի: Ֆրենսիսը՝ բրդե, վանդականախշ ականջակալներով գլխարկ էր դրել, ինչպիսին Ռասը կրում էր երեխա ժամանակ, արագ ցատկեց Fury-ի առջևի նստարանին, բայց գլխարկը չհանեց գուցե այն պատճառով, որ տաքացուցիչն այնքան էլ լավ չէր աշխատում, և, որպեսզի դիմապակին չքրտնի, ստիպված էին պատուհանը բաց թողնել: Կամ էլ հասկացել էր, թե որքան հմայիչ է թվում Ռասին այդ գլխարկով, այն աստիճան, որ նրա շունչը կտրվում է, հավատը՝ երերում գայթակղության առաջ: Հետևում նստած երկու, ավելի տարիքով այրիները, ըստ երևույթին, հասկացել էին դա, որովհետև ամբողջ ճանապարհին՝ Միդուեյի օդանավակայանի մոտով, հետո 55-րդ փողոցով անցնելիս, Ռասին հանգիստ չէին տալիս կնոջ ու չորս երեխաների մասին ցուցադրական-խայթող հարցուփորձով:

«Աստծո համայնքը» տեղավորվել էր գերմանացիների կառուցած դեղնաղյուս, առանց զանգակատան փոքրիկ եկեղեցում, որի մի կողմից կառչած էր կուպրածածկ կտուրով ժողովարանը: Հոգևոր հոտը, որ գերազանցապես բաղկացած էր կանանցից, առաջնորդում էր Թեռ Քրենշոն՝ միջին տարիքի հոգևոր հովիվ, որը մեծ լավություն էր անում՝ առանց շնորհակալության ընդունելով նրանց քաղաքամերձ խմբակի օգնությունը: Երկու շաբաթը մեկ, երեքշաբթի օրերին, Թեռն Ռասին ու Ջիթիին ներկայացնում էր առաջնահերթ գործերի ցուցակը: Նրանք գալիս էին ոչ թե քարոզելու, այլ ծառայելու: Ջիթին ու Ռասը գնում էին քաղաքացիական իրավունքների համար ցույցերի, իսկ խմբակի մյուս կանանց ստիպված էին հիշեցնել, որ եթե նրանք դժվարությամբ են հասկանում «քաղաքացիների» լեզուն, չի նշանակում, որ իրենք էլ պետք է խոսեն բարձր ու դանդաղ, որպեսզի հասկանալի լինի: Խմբակը հզոր փորձ էր փոխանցել այն կանանց, որոնք վարժվել էին ու հաղթահարել Սաութ Մորգան փողոցի՝ 6700 թաղամասում շրջելու վախը: Իսկ նրանց, ովքեր չէին վարժվել (տիկնանցից ոմանք խմբակին միացել էին զուտ մրցակցելու համար, որ ապացուցեն, որ մյուսներից վատը չեն), Ռասը ստիպված էր այնպես նվաստացնել, ինչպես իրեն նվաստացրել էր Ռիք Էմբրոուզը, ու խնդրել, որ այլևս չգան:

Ֆրենսիսը դեռ ստուգում չէր անցել, քանի որ Քիթին նրան կողքից հեռու չէր թողնում: Երբ հասան Մորգան Սթրիթ, դժկամությամբ իջավ մեքենայից և սպասեց, մինչև կխնդրեին օգնել Ռասին ու երկու այրիներին, որ ժողովարան տեղափոխեն գործիքների արկղերն ու հագած ձմեռային շորերով պարկերը: Նրա անվճռականությունը վատ նախազգացումների փոթորիկ բարձրացրեց Ռասի մեջ. վախենում էր, որ ձևը բովանդակության, գլխարկն արկածախնդիր ոգու տեղ է ընդունել: Բայց կարեկցանքի պոռթկումը ցրեց տագնապները, երբ Թեռ Քրենշոն, ուշադրություն չդարձնելով Ֆրենսիսին, երկու տարեց այրիներին ուղարկեց կիրակնօրյա դպրոցի համար բերված հին գրքերի ցանկը կազմելու: Տղամարդիկ էլ նոր ջրատաքացուցիչ էին տեղադրելու նկուղում:

— Իսկ Ֆրենսի՞սը,– հարցրեց Ռասը:

Կինը կանգնել էր մուտքի մոտ: Թեռն սառը հայացքով չափեց նրան:

— Էնտեղ ահագին գիրք կա:

— Ինչո՞ւ չես օգնում ինձ ու Թեռյին:

Կնոջ՝ արագ գլխով անելն ամրապնդեց նրա բնազդային համակրանքը՝ ցրելով կասկածը, որ հենց ինքն էր ուզում ցույց տալ, թե ինչքան ուժեղ է, ինչ վարպետությամբ է տիրապետում գործիքներին: Նկուղում Ռասը հանվեց ու մնաց միայն շապիկով, արջի պես գրկեց անդուր, ասբեստապատ ջրատաքացուցիչն ու իջեցրեց տեղից: 47 տարեկանում Ռասն արդեն բարակ չէր նորատունկ ծառի պես. թիկնեղ, լայնակուրծք, ծեր կաղնու նման ամրապինդ էր: Բայց Ֆրենսիսի համար նկուղում գործ չեղավ. մնում էր միայն նայել, թե ուրիշներն ինչպես են աշխատում, ու երբ պոկվեց արտածման խողովակը, և ստիպված էին գործի դնել հորատադուրն ու ակոսահանը, Ռասը միանգամից չնկատեց, որ Ֆրենսիսը դուրս է եկել նկուղից:

Ռասին Թեռյի մեջ ամենից շատ դուր էր գալիս զսպվածությունը, որը նրան ազատում էր սնափառ երազանքներից, թե իրենց միջև կարող է միջռասայական բարեկամություն սկսվել: Թեռն Ռասի մասին կարևոր փաստեր գիտեր՝ չի խորշում ծանր աշխատանքից, ամբողջ կյանքն ապրել է աղքատության սահմանագծին, հավատում է Հիսուս Քրիստոսի աստվածային բնությանը, իսկ մանրամասն պատասխան ենթադրող հարցեր Թեռն չէր տալիս ու չէր խրախուսում: Օրինակ՝ մի մտավոր հետամնաց տղա կար՝ Ռոնին: Նա հարևանությամբ էր ապրում և տարվա

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark